ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՌՈՒԶԱՆՆԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ
ՀԱԿՈԲ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀԱՋՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄՆԵԼՈՒ ՄՈՏԻՎԱՑԻԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍՈՒՆ ՏԱՐԻՔՆԵՐՈՒՄ

DOI: 10.24234/journalforarmenianstudies.v4i63.80

Ամփոփում

Հոդվածում քննարկվում են երիտասարդ և հասուն տարիքի անձանց հաջողության հասնելու ձգտման յուրահատկությունները, գիտական գրականության մեջ և հետազոտություններում մեկտեղված ու վեր հանված հաջողության՝ որպես բազմաբովանդակ ֆենոմենի, արտացոլման և դրսևորման առանձնահատկությունները՝ կենսագործունեության տարբեր ոլորտներում:

Հաշվի առնելով, որ մասնագիտական գործունեությունը կարևոր տեղ ունի յուրաքանչյուր մարդու կյանքում, բնականաբար այն ենթակա է քննության և գնահատվում է ինչպես ընդհանուր բավարարվածության, այնպես էլ հաջողության զգացումի տեսանկյունից, ուստի հասարակության համար այս խնդիրները կարևորվում են: Այս տեսանկյունից անհատականության և մասնագիտության համաչափության կամ անհամաչափության բազմաչափ սոցիալ-հոգեբանական երևույթները և խնդիրները միշտ արդիական են:

Այսպիսով, կարող ենք ասել, որ աշխատանքային գործունեությունը հասարակական բնույթ ունի: Մարդը հասարակական արժեքներ է ստեղծում և հնարավորություն է ստանում օգտվել այլ մարդկանց կողմից ստեղծված արժեքներից: Հաջողության հասնելու համատեքստում հոդվածում կարևորվել է նաև անձի ինքնարտահայտման բաղադրիչը, նկատառելով, որ աշխատանքն ըստ գործառույթների, իրականացման միջոցների և արդյունքի՝ բաժանվում է ոլորտների, որտեղ և անձնավորությունն իրականացնում է մասնագիտական գործունեություն:

Անդրադարձ է կատարվել նաև հաջողության հասնելու դրսևորումների տարանջատմանը, մասնավորապես՝ ռազմական ոլորտին առնչվող հաջողության գործոններին, որն իր էությամբ ու բովանդակությամբ ունի տեսակիրառական նշանակություն: Ծառայողական գործունեության արդյունավետության գնահատման մակարդակների որոշման ընթացքում հստակեցվեց, որ փորձարկվողների

ընդհանուր հուզականության և նրա առանձին բաղադրամասերի նորմայում արտահայտվածությունը ուղղակիորեն ազդում է հաջողության հասնելու մակարդակի վրա: Եվ հաջողության հասնելու ձգտման հիմքում ընկած են որոշակի սոցիալ-հոգեբանական գործոններ, դրանց անդրադարձել ենք հոդվածում, որոնք՝ որպես հաջողության որոշակի մակարդակ, կախված են անձի սոցիալական դիրքի, սոցիալական վիճակի բարելավման և դրանով պայմանավորված բավարարվածության զգացումի հետ:

Հաստատվեց, որ հաջողության հասնելու մակարդակի բարձր ցուցանիշները պայմանավորված են նաև առաջադիր նպատակներին հասնելու ձգտումով, որոնք փոխպայմանավորված են նաև հոգեբանական, տեղեկատվական և ֆիզիկական անվտանգության ապահովվածության մակարդակով ու խնդիրներով, ինչպես նաև բարոյահոգեբանական վիճակով, այն է՝ յուրաքանչյուր փորձարկվողի հոգեկանի վիճակը տվյալ ժամանակահատվածում և կոնկրետ պայմաններում, այսինքն՝ այն վիճակը, որն արտահայտվում է նրանց ծառայողամարտական ակտիվությամբ և արտակարգ իրավիճակներում սահմանված կարգով գործելու նրանց պատրաստությամբ:

Բանալի բառեր և արտահայտություններ. հաջողության հասնելու մոտիվացիա, վախ անհաջողությունից, ռիսկի հակվածություն, երիտասարդություն, հասուն տարիք, հոգևոր արժեք, բարոյահոգեբանանակ վիճակ, գործունեության արդյունավետություն, հոգեբանական անվտանգություն, տեղեկատվական անվտանգություն, ֆիզիկական անվտանգություն:

Ներածություն

Անձի հոգեկանը դինամիկ է, որը մարդուն մղում է հարանոր ձեռքբերումների, ինքնակատարելագործման և ինքնիրացման սեփական պահանջմունքների բավարարման նպատակով: Հաջողության հասնելը կարևոր է ինչպես անձի, այնպես էլ այն հասարակական ոլորտի համար, որում գործում կամ արարում է տվյալ անձը, ուստի հաջողության հասնելու մոտիվացիայի ուսումնասիրության հիմնախնդիրը շարունակում է պահպանել իր արդիականությունը: Այս տեսանկյունից ժամանակացից՝ փոխակերպվող հասարակություններում առանձնահատուկ հետաքրքրություն են ներկայացնում երիտասարդները և հասուն տարիքներում գտնվող անձինք, քանի որ այս սոցիալական խմբի անձինք իրենց կենսագործունեության ընթացքում ավելի շատ են առաջադրում նպատակներ. ըստ այդմ՝ սահմանում են նպատակներին հասնելու արդյունավետ ուղիներ:

Հայտնի է, որ հաջողությունը բազմաբովանդակ ֆենոմեն է, որն իր արտացոլումն է գտնում կենսագործունեության գրեթե բոլոր ոլորտներում: Հաջողության հասնելու ձգտման հիմնախնդիրը՝ սկսած հնագույն ժամանակներից, տարբեր մոտեցումներով, շարունակում է ուսումնասիրվել գիտության տարբեր բնագավառների ներկայացուցիչների կողմից:

Հին մշակույթներում «հաջողություն» նշանակում էր մեկ անձի գերակայություն մյուսների նկատմամբ, ինչը նրան վերագրում էր, օրինակ՝ ուժ, կամք, փառք, ինտելեկտ, հաղթանակ, հարստություն և այլն: Եվ այժմ էլ հաջողակ մարդիկ բնութագրվում են նշված հատկանիշներով (3):

Մասնագիտական գրականության մեջ հաջողության երևույթը դիտարկվել է ամենատարբեր մեկնաբանություններով: Օ. Վ. Գրիգորևան և Ե. Լ. Յակովլևան իրենց աշխատությունում վկայում են, որ Ֆ. Նիցշեն, ներկայացնում էր մարդու կերպարը, որպես հաջողակ մարդ (3), հաջողությունը սոցիալական ճանաչման ձեռքբերում է «նշանակալի ուրիշների» կողմից/ Տուլչինսկի/ (9), հաջողությունը արժեք ներկայացնող նպատակի հետևողական իրականացումն է/ Ա. Անդրեև/ (1), հաջողությունը նաև կոգնիտիվ գործընթացների և ինքնակարգավորման հմտությունների գրավականն է /Մ.Քովինգտոն/ (12), հաջողությունը դիտարկվում է որպես որակական կամ քանակական գնահատման ընդունակություն /Հ. Հեքհաուզեն/ (10), հաջողության բաղադրիչների մեջ առանձնացվում են՝ ֆինանսական դիրքը, ֆիզիկական վիճակը, ինտելեկտը, հոգևոր զարգացումը, անձնային ոլորտը, ընտանիքը, կարիերան /Զ.Զիգլար/ (6):

Հաջողակ մարդը բնորոշվում է իր ինքնադրսևորման ձգտմամբ/Ա. Մասլոուն/ (8): Ինչ վերաբերվում է հաջողության ձգտման մեխանիզմներին, ապա առանձնացվում են նպատակի սահմանումը, մոտիվացիան, կանխատեսելու, ռիսկի դիմելու, միջավայրին հարմարվելու կարողությունները, իրավիճակի ամբողջական գնահատումը, որոնք հանդես են գալիս կարգավորման, նպատակաուղղվածությամբ, համարձակությամբ, համբերատարությամբ, ռեֆլեքսիվությամբ և դրսևորվող կյանքից բավարարվածության, երջանկության, իմաստունության զգացողություններով /Ն. Ա. Դեևա/ (4): Հաշվի առնելով ներկայիս մարտահրավերները, հարցը դիտարկենք նաև պետության ռազմական ներուժի, մասնավորապես՝ ռազմական ոլորտի հաջողությունների համատեքստում: Ռազմական հաջողությունների հասնելու համար պահանջվում է ոչ միայն ժամանակակից սպառազինություն և ռազմականտեխնիկա, այլև կառավարման բոլոր մակարդակներում մասնագիտական անհրաժեշտ գիտելիքներով, հմտություններով, որոշակի բնութագրերով օժտված հոգեպես ու ֆիզիկապես պատրաստված անձնակազմ: Ուստի, զինված ուժերում

մարտունակության պահպանման և դրա մակարդակի շարունակական բարձրացման տեսանկյունից կարևորվում են ծառայողական գործունեության արդյունավետության գնահատման հոգեբանական մեխանիզմների բացահայտումը, ինչը կարող է նպաստել ՋՈՒ-ում մարդկային ռեսուրսների արդյունավետ կառավարմանը:

Հետազոտությամբ ապացուցվել է, որ մարտական հերթապահություն իրականացնող զինծառայողներին բնորոշ է հաջողության հասնելու բարձր ցուցանիշը, որի հիմքում ընկած են ծառայողամարտական խնդիրների հաջողությամբ կատարման, ծառայողական առաջխաղացման ձգտումները, ապրումակցման, հոգևոր արժեքների գերակշռումը: Հիմնավորվել է, որ հաջողության հասնելու բարձր ցուցանիշը պայմանավորված է նաև հակառակորդի հնարավոր կամ հավանական սադրիչ գործողությունների, հավանական մարտական գործողությունների մշտական գիտակցմամբ, անձնային հատկությունների և կառույցների զարգացվածության աստիճանից, ինչպես նաև ծառայության սոցիալ-տնտեսական, սոցիալ-կենցաղային պայմաններով ու գործոններով: Հատկանշական է, որ «հաջողության հասնելու մակարդակ»-ի առավել բարձր ցուցանիշներ են արձանագրվել այն զինծառայողների մոտ, որոնց արժեհամակարգում գերակշռել են հոգևոր արժեքները:

Այսպիսով, կարելի է նկատել, որ հաջողությունը արտաքին գործոնների և ներքին բավարարվածության միասնությունն է: Մասնավորապես երիտասարդության և հասուն տարիքներում հաջողության հասնելու դրսևորումների տարանջատումը ունի տեսակիրառական նշանակություն:

Մեթոդաբանությունը

Հետազոտությունը կատարվել է Թ. Էլերսի «Անձի հաջողության հասնելու մոտիվացիայի ախտորոշում», Ա.Ա. Ռեանի «Հաջողության մոտիվացիա և վախ անհաջողությունից», Ա. Շմելևայի«Ռիսկի նկատմամբ հակվածության ուսումնասիրություն» մեթոդիկաներով, որոնք վերալրացնում են հետազոտվողների տեղեկատվական բազան՝ ըստ մեթոդիկայի կիրառման ցուցիչների:

Հետազոտվողների համակազմը, հետազոտության պայմանները, անցկացման վայրը և ժամկետները

Հետազոտության համար ընտրվել է 100 փորձարկվող, որից 50—ը 20-25 տարեկան երիտասարդներ և 25-ից մինչև 65 տարեկան՝ 50 հասուն տարիքի անձինք /Է. Էրիքսոն/: Հետազոտվողներն ունեն նույն մասնագիտական ուղղվածությունը և աշխատում են համանման կազմակերպություններում:

Հետազոտության ընթացքում մեթոդիկաների կիրառման վերաբերյալ հարցեր չեն առաջացել, տեքստը ամբողջությամբ ընկալվել է հետազոտվողների կողմից: Հետազոտությունը կատարվել է տարվա կտրվածքով 2 անգամ, որոնց միջինացված տվյալներն ամփոփված են համապատասխան նկարներում:

Հետազոտման նպատակով կիրառվել են մի շարք մեթոդիկաներ:

Քննարկում

Ներկայացնում ենք Թ.Էլերսի «Անձի հաջողության հասնելու մոտիվացիայի ախտորոշում» մեթոդիկայից ստացված արդյունքները:



Նկար 1. Հաջողության հասնելու մոտիվացիայի տարբերությունը երիտասարդների և հասուն տարիքի անձանց միջև:

Հետազոտության տվյալները ցուցադրված են նկար 1-ում, որից էլ կարող ենք ենթադրել որ, երիտասարդները համեմատաբար շատ են հակված հաջողություններ ձեռքբերելուն, քանի որ դա հաճախ հանգեցնում է խմբում բարձր սոցիալական կարգավիճակ ստանձնելուն, ինչից նրանք բավարարվածության զգացում են ունենում, իսկ հասուն տարիքի անձինք հաճախ մտածում են, որ այլևս այն տարիքում չեն, որ կարողանան նոր հաջողություններ գրանցել, ուստի նրանց մոտիվացիան այս տեսանկյունից այդքան էլ աչքի չի ընկնում իր գերազանցությամբ:

Այժմ անդրադառնանք Ա. Ռեանի «Հաջողության մոտիվացիա և վախ անհաջողությունից» մեթոդիկայից ստացված արդյունքներին, որոնք հնարավորություն կտան ավելի հիմնավոր կերպով պնդել նախորդ մեթոդիկայից ստացած արդյունքները, քանզի դրանք ունեն փոխկապվածություն:



Նկար 2. Հաջողության մոտիվացիայի և անհաջողությունից վախի դրսևորման տարբերությունը երիտասարդների և հասուն տարիքի անձանց միջև:

Նկար 2-ում պատկերվածմեթոդիկայի արդյունքներից ելնելով կարող ենք ասել, որ երիտասարդները ավելի հակված են հաջողության մոտիվացիայի դրսևորման գործունեության տարբեր ոլորտներում, քան հասուն տարիքի հետազոտվողները: Վեջիններս հաճախ քայլեր չեն ձեռնարկում հաջողության հասնելու համար. նրանց ակտիվության հիմքում ընկած է անհաջողությունից վախը:

Ն. Ա. Դեևան հաջողության հասնելու գործընթացում կարևորում է ռիսկի հակվածությունը որպես կարևոր հոգեբանական բաղադրիչ. դրանից ելնելով՝ ստորև ներկայացվում են Ա. Գ. Շմելևայի «Ռիսկի նկատմամբ հակվածության ուսումնասիրություն» մեթոդիկայից ստացված արդյունքները՝ հասկանալու երիտասարդների հաջողության մոտիվացիայի ուժեղ արտահայտվածությունը:



Նկար 3.Ռիսկի նկատմամբ հակվածության տարբերությունը երիտասարդների և հասուն տարիքի անձանց միջև:

Հետազոտության տվյալների հիման վրա կազմվել է նկար 3-ը, որից էլ տեսանելի է, որ հաջողության մոտիվացիայի բարձր մակարդակ ունեցողները հակված են ռիսկայնության բարձր մակարդակի, իսկ, ինչպես հավաստում են նախորդ երկու մեթոդիկաների արդյունքները, հաջողության բարձր մոտիվացիայով բնութագրվում են երիտասարդները:

Այսպիսով, հաջողության հասնելու մոտիվացիայի ուսումնասիրումը հատկապես պատերազմական գործողություններից հետո, երբ գրեթե յուրաքանչյուր ընտանիք կրել է նյութական և հոգևոր զրկանքներ և ինչ-որ առումով արտաքնապես թվում էր, որ պետք է գերակայի հաջողության ձգտման մոտիվացիայի նվազումը կենսագործունեության բոլոր ոլորտներում, այդուհանդերձ նկատելի են որոշակի դրական տեղաշարժեր ուսումնասիրված տարբեր տարիքի անձանց հաջողության ձգտման և անհաջողությունից խուսափելու գործընթացներում: Հարցազրույցի ընթացում բացահայտվել են որոշակի իրողություններ կապված նպատակի գիտակցման և ձգտման ուղիների որոնման մեջ:

Եզրակացություններ

- Երիտասարդների մեծամասնությունն ունեն հաջողության մոտիվացիայի չափազանց բարձր մակարդակ, մինչդեռ հասուն տարիքի անձանց մեծ մասի մոտ գերակշռում է հաջողության մոտիվացիայի միջին մակարդակը:
- Անհաջողությունից վախը նկատելիորեն բարձր է արտահայտված հասուն տարիքի անձանց մոտ, քան երիտասարդների շրջանում: Վերջիններիս մոտ գերակշռում է անհաջողությունից վախի

զգալիորեն ցածր մակարդակ:

- Երիտասարության տարիքում հաջողության հասնելու ճանապարհին ռիսկայնության մակարդակն ավելի բարձր է, քան հասուն տարիքում: Նրանք, ովքեր հակված են հաջողության հասնելու մոտիվացիային, բնութագրվում են ռիսկի միջին կամ բարձր մակարդակով:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Андреев А. (2015), Энциклопедияуспеха. Центринновац. технологий, Москва, 1260с.
2. Гордеева Т. О. (2006), Психология мотивации достижения, Смысл; Издательский центр «Академия», Москва, 336 с.
3. Григорьева О. В., Яковлева Е. Л. (2014), Лики успеха., 2-е изд., изд-во «Познание» Института экономики, управления и права, Казань, 216 с.
4. Деева Н. А., Жизненная успешность: механизм, свойство, состояние. контексты понимания, “Современные исследования социальных проблем” 2017, Том 8, № 11, 22– 45 с.
5. Дементий Л. И., Нечепоренко О. П., Личностные особенности и типология успешных и неуспешных личностей. “Психология и педагогика”. Вестн. Ом. ун-та, 2011, № 2, 277 – 284 с.
6. Зиглар З. (2000), Умение добиваться успеха для “чайников”: Пер. с англ. Издательский дом “Вильямс”, Москва, 224 с.
7. Макклелланд Д. (2007). Мотивация человека, СПБ., Питер, 672 с.
8. Маслоу А. (2019), Мотивация и личность. 3-е изд., СПб., Питер, 400 с.
9. Тульчинский Г. Л., Успех этики успеха. Человеческий капитал, 2022, № 17, 27 - 35 с.
10. Хекхаузен Х. (2001), Психология мотивации достижения, Речь, Санкт-Петербург, 256 с.
11. Atkinson J. W., Motivational determinants of risk taking behavior. Psychological Review Vol. 64, No. 6, 1957, pp. 359 – 372.
12. Covington M. V., Goal theory, motivation, and school achievement. An Integrative Review. 2000. № 51, pp.171 – 200.
13. Murray H. A. (1947), Explorations in personality, New York, p. 790.

REFERENCES

1. Andreev A. (2015), Entsiklopediyauspekha. Tsentrinnovats. Tekhnologiy /Encyclopedia of success. Innovation Center technologies/, Moscow, p. 1260.
2. Gordeeva T. O. (2006), Psikhologiya motivatsii dostizheniya, Smysl /Psychology of achievement motivation, Meaning/; Publishing center "Academy", Moscow, p. 336.
3. Grigorieva O. V., Yakovleva E. L. (2014), Liki uspekha /Faces of success/, 2-nd ed., Publishing House “Poznanie” Institute of Economics, Management and Law,. Kazan, p. 216.
4. Deeva N. A., Zhiznennaya uspeshnost': mekhanizm, svoystvo, sostoyaniye. konteksty ponimaniya /Success in life: mechanism, property, state. contexts of understanding/, “Modern studies of social problems” 2017, Vol. 8, No. 11, pp. 22–45.
5. Dementy L. I., Necheporenko O. P., Lichnostnyye osobennosti i tipologiya uspeshnykh i neuspeshnykh lichnostey /Personality characteristics and typology of successful and unsuccessful individuals/. "Psychology and pedagogy".Vestn.Ohm.un-ta, 2011, No. 2, pp. 277 – 284.
6. Ziglar Z. (2000), Umeniye dobivat'sya uspekha dlya “chaynikov” /The ability to achieve success for “dummies”/: Trans. from English, Williams Publishing House, Moscow, p.224.
7. McClelland D. (2007), Motivatsiya cheloveka /Human motivation/, St. Petersburg: Peter, p. 672.
8. Maslow A. (2019), Motivatsiya i lichnost'. /Motivation and personality/. 3rd ed., St. Petersburg: Peter, p. 400.
9. Tulchinsky G. L., Uspekh etiki uspekha /Success of ethics of success./ Human capital, 2022, No. 17, pp.27 – 35.
10. Heckhausen H. (2001), Psikhologiya motivatsii dostizheniya /Psychology of achievement motivation/. Rech, St. Petersburg, p.256.
11. Atkinson J. W., Motivational determinants of risk taking behavior. Psychological Review Vol. 64, No. 6, 1957, pp.359 – 372.
12. Covington M. V. Goal theory, motivation, and school achievement. An Integrative Review, 2000, No. 51, pp.171 – 200.
13. Murray H. A. (1947), Explorations in personality, NewYork, p. 790.

Рузанна Петросян, Акоп Геворгян

Мотивация к достижению успеха в молодости и в зрелом возрасте

Заключение

Ключевые слова и выражения: мотивация к успеху, страх неудачи, склонность к риску, молодость, взрослая жизнь, духовная ценность, морально-психологическое состояние, эффективность деятельности, психологическая безопасность, информационная безопасность, физическая безопасность.

В статье рассматриваются особенности стремления к достижению успеха у молодых и людей зрелого возраста, особенности отражения и проявления его как многосодержательного явления, интегрированного и освещенного в литературе и исследованиях, в различных сферах жизни.

Учитывая, что профессиональная деятельность занимает важное место в жизни каждого человека, она, естественно, подлежит рассмотрению и оценивается как с точки зрения общего удовлетворения, так и с точки зрения ощущения успешности, поэтому для общества эти вопросы имеют первостепенное значение. с этой точки зрения многомерные социально-психологические явления и проблемы симметрии или асимметрии личности и профессии всегда актуальны.

Таким образом, мы можем сказать, что трудовая деятельность носит общественный характер. Человек создает общественные ценности и получает возможность пользоваться ценностями, созданными другими людьми. В контексте достижения успеха в статье также был выделен компонент самовыражения личности, отметив, что работа делится на области, в которых человек осуществляет профессиональную деятельность, в зависимости от функций, средств реализации и результата.

Был также затронут вопрос разделения проявлений успеха, в частности факторов успеха, связанных с военной сферой, которая по своей сути и содержанию имеет вид прикладного значения. В ходе определения уровней оценки эффективности служебной деятельности было выяснено, что выраженность в норме общей эмоциональности испытуемых и ее отдельных компонентов напрямую влияет на уровень успешности, а стремление к достижению успеха базируется на определенных социально-психологических факторах, отмеченных нами в статье, которые, как определенный уровень успеха, зависят от социального положения человека, улучшения социального положения и обусловленного этим чувства удовлетворения.

Подтверждено, что высокие показатели уровня успешности также обусловлены стремлением к достижению поставленных целей, которые

взаимообусловлены уровнем и проблемами обеспечения психологической, информационной и физической безопасности, а также морально-психологическим состоянием, то есть состоянием психики каждого испытуемого в данный период и в конкретных условиях, то есть состоянием, которое выражается в их боевой активности и готовности действовать в установленном порядке в чрезвычайных ситуациях.

Ruzanna Petrosyan, Hakob Gevorgyan

Motivation for success at a young and mature age

Conclusion

Key words and expressions: motivation to success, fear of failure, risk appetite, youth, maturity, spiritual value, moral and psychological state, efficiency of activity, psychological security, Information security, physical security.

The article discusses the peculiarities of the aspirations of young and mature people to success, the peculiarities of reflecting and manifesting success as a multifaceted phenomenon, combined and identified in literature and research, in various spheres of life.

Considering that professional activity occupies an important place in the life of every person, naturally, it is checked and evaluated both in terms of overall satisfaction and in terms of a sense of success; therefore, these issues are of paramount importance to society.From this point of view, multidimensional socio-psychological phenomena and problems of symmetry or asymmetry of personality and profession are always relevant.

Thus, we can say that the work activity is of a public nature. A person creates social values and gets the opportunity to take advantage of the values created by other people. In the context of achieving success, the article also highlighted the component of personal self-expression, given that the work is divided into areas in which a person carries out professional activities, depending on the functions, means of implementation and result.

The issue of separating the manifestations of success, in particular success factors related to the military sphere, which in its essence and content has a kind of applied significance, was also raised.In the course of determining the levels of performance assessment, it was found that the normal expression of the general emotionality of the subjects and its individual components directly affects the level of success.And the desire for success is based on certain socio-psychological factors, which we discussed in the article, which, as a certain level of success, depend on a person's social status, improvement of social status and the resulting sense of satisfaction.

It was confirmed that high success rates are also due to the desire to achieve the set goals. Which are also mutually conditioned by the level and problems of ensuring psychological, information and physical security, as well as the moral and psychological state, that is, the state of mind of each subject in a given period and in specific conditions, that is, a state that is expressed in their combat activity and readiness to act in accordance with the established procedure in emergency situations.

Ռուզաննա Պետրոսյան - Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի դեկան, հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ: Գիտական հետաքրքրությունները՝ սոցիալական հոգեբանություն, կրթության կառավարում, կառավարման հոգեբանություն: Հեղինակ է շուրջ հինգ տասնյակ հոդվածի: rpetrosyan@inbox.ru

Рузанна Петросян - декан факультета психологии образования и социологии Армянского государственного университета имени Х. Абовяна, кандидат психологических наук, доцент. Научные интересы: социальная психология, образовательный менеджмент, психология управления. Автор около пяти десятков статей. **rpetrosyan@inbox.ru**

Ruzanna Petrosyan - Dean of the Faculty of Psychology and Sociology of Education at ASPU after Kh. Abovyan,Candidate of Psychological Sciences, Associate Professor. Scientific interests: Social Psychology, Educational Management, Management Psychology.The author of about five dozen articles.rpetrosyan@inbox.ru

Հակոբ Գևորգյան - Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի Զարգացման և կրթության հոգեբանության ամբիոնի դասախոս: Գիտական հետաքրքրությունները զինվորական հոգեբանություն, սոցիալական հոգեբանություն: Հեղինակ է շուրջ մեկ տասնյակ հոդվածի: gevorgyanhakob24@aspu.am

Акоп Геворкян-Х. Преподаватель кафедры психологии развития и образования факультета психологии образования и социологии АГПУ им. Х. Абовяна. научные интересы военная психология, социальная психология. Автор около десятка статей. gevorgyanhakob24@aspu.am

Hakob Gevorgyan -Lecturer at the Department of Developmental Psychology and Education, Faculty of Educational Psychology and Sociology at ASPU after Kh. Abovyan. Scientific interests: Military Psychology, Social Psychology.The author of about a dozen articles.gevorgyanhakob24@aspu.am

Խմբագրություն է ուղարկվել 11.12.2023թ.
Հանձնարարվել է գրախոսության 20.12.2023թ.
Հրապարակման է ներկայացվել 10.01.2024թ.